ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՍՏԱՆԻՍԼԱՎ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՏԱ նախարարության թվայնացման վարչության փորձագետի կողմից 2025 թվականի հունվարի 5-ից հունվարի 13-ն ընկած ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ

1. «Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտ» նախաձեռնության շրջանակում իրականացվել է մասնակցություն ՀՀ կառավարության «Պետության կողմից արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսների հասանելիության տրամադրման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի մշակման գործընթացին: Որոշման նախագիծը ուղարկվել է կարծիքի ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն: Կարծիքները ստացվել և ամփոփվել են, որից հետո նախագիծը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն պետական-իրավական փորձաքննության: Նախագիծը ներկայացվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտե և ստացել է դրական դիրքորոշում:

   «Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտ»-ի պաշտոնական կայքի զարգացման ուղղությամբ իրականացվել են աշխատանքներ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի հետ, ինչպես նաև կայքի տեխնիկական և բովանդակային աշխատանքները՝ համահունչ «Հենակետ v.1.1.1» պաշտոնական դիզայն համակարգին:

   Իրականացվել են կայքի համապատասխանեցման աշխատանքներ «Վեբ բովանդակության մատչելիության ուղեցույցի» (Web Content Accessibility Guidelines, WCAG 2.1) **AA** մակարդակի ստանդարտներին:

2. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mullbery» համակարգով հանձնարարված աշխատանքների կատարում: Էլեկտրոնային փոստով ստացված նամակների հետադարձ կապի ապահովում: Ընթացիկ այլ հանձնարարականների կատարում, որոնք բխում են աշխատանքային պարտականություններից՝ համագործակցելով նախարարության համապատասխան վարչությունների հետ:

Scanned with CamScanner

3. Թվայնացման վարչության ընդհանուր աշխատանքների համակարգում, հանդիպումների կազմակերպում այլ գերատեսչությունների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ, ակտիվ կապ նախարարության տարբեր վարչությունների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ:

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ՀԵՂԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները գնահատում եմ՝

_____:

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՍՏԱՆԻՍԼԱՎ ՀԱԿՈԲՅԱՆ**

Scanned with CamScanner